

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ

ՀՈՅԱԿԱՊ ԵՒ ԲԱՅԱՌԻԿ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Չորս լեզուներով. Հայերէն, Անգլերէն, Ֆրանսերէն եւ Իտալերէն, Կը պարունակէ Թ. Ժ. ԺԱ. ԺԲ. ԺԳ. դարերու հայկական մանրանկարչութեան գեղեցկագոյն էջեր, գործ՝ հայ արուեստագէտներու, որոնք ծաղկեցան Մեծ Հայաստանի մէջ:

Հատորը ունի 84 գունատիպ պատկերներ, հաւատարմօրէն վերարտադրուած իրենց բնագիրներէն եւ իրենց բնական մեծութեամբ: Հատորին մեծութիւնն է 35x45 հրդմ., տպագրուած ընտիր քուղի վրայ եւ շֆեղօրէն կազմուած:

ԳՈՐԾԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Հատորին սկիզբը կը տրուի համառօտ տեղեկութիւն Ս. Ղազարու Մատենադարանին շուրջ: Կը յաջորդէ ընդարձակ Ներածութիւն մը՝ հայկական Մանրանկարչութեան արուեստին վրայ, զանազան դարերու ընթացքին՝ անոր առած յեղաշրջումներուն, զարգացման, անոր առանձնայատկութիւններուն, եւ արեւելեան ուրիշ մանրանկարչութիւններու հետ ունեցած առընչութիւններու մասին:

Գործին վրայ հսկած է Յանձնախումբ մը, կազմուած՝ արուեստի պատմութեան մէջ հմուտ և մասնագէտ անձնաւորութիւններէ և ուսուցչապետներէ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԵՒԵԼՔԸ

Հայ Ոգիին բովանդակ կեանքը, սրբազան շունչը, երեսակայութիւնը եւ սերը գոյներու՝ յայտնի կը խօսին այս մանրանկարչական էջերէն:

Հոն աչքի կը զարնէ նրբութիւն արուեստի, նիւթերու և արտայայտութեան մէջ՝ ներշնչումի նոխորութիւն, զանազանութիւն՝ դիմագծային եւ լուսանցազարդային մասերու մէջ:

Անտարակոյս՝ հայկական մանրանկարչութիւնը, Բիզանդականին հետ միասին, կը ներկայացնէ անգուզական արժէք մը սրբազան արուեստի ասպարէզին մէջ, եւ ունի իր մեծ կարեւորութիւնը արեւելեան մանրանկարչութեան նուիրուած համեմատական ուսումնասիրութիւններու համար:

ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԵԾԱՊԷՍ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ Է

բոլոր արուեստագէտներու եւ ուսումնասէրներու համար, որոնք նուիրուած են սրբազան արուեստի պատմութեան, ինչպէս նաեւ Ս. Գրքի պատմութեամբ զբաղող մասնագէտներու, գեղարուեստական կեդրոններու, գիտական և գրական Հաստատութիւններու, Հեմարաններու եւ բոլոր աշխարհի Գրատուններու համար:

Բոլոր անոնք՝ որ ստացած են օրինակ մը այս հոյակապ հատորէն, հիացմունքի խօսքեր միայն ունին, որ նշան է հրատարակութեան ունեցած մեծ յաջողութեան:

Գին՝ Իտալիոյ համար Լիր 50.000
Արտասահմանի համար \$ 80.—

Գիմել ուղղակի Միֆարեան Տպարանի վարչութեան: